ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմիի 1

№ 1288-Ա « 09 » ապրիլի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի
Հ.605-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1.Երևանի քաղաքապետի 2022 թվականի փետրվարի 21-ի «Երևանի քաղաքապետի տեղակալների և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի միջև պարտականությունների բաշխում կատարելու մասին» N 605-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում՝ «անշարժ գույքի կառավարման» բառերը փոխարինել «շինարարության և բարեկարգման» բառերով.

2) Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում՝ «կոմունալ տնտեսության, շինարարության և բարեկարգման» բառերը փոխարինել «եկամուտների հաշվառման և գանձման, ֆինանսական» բառերով.

3)Որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ համակարգում և վերահսկում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, իրավաբանական, ճարտարապետության և քաղաքաշինության, քաղաքաշինական հատուկ ծրագրերի, գնումների, կազմակերպական, մարդկային ռեսուրսների կառավարման, մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչությունների, քարտուղարության, առաջին և զորակոչային հարցերի կազմակերպման բաժնի աշխատանքները:».

4) Որոշման հավելվածով հաստատված ցանկի «Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ» բաժնի 10.1-ին կետը ճանաչել ուժը կորցրած:».

5) Որոշման հավելվածով հաստատված ցանկի «Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյան» բաժնի 11-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:»:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ